

ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ԱՐԵԻԵԼԵԱՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐՈՒՄ

Աշխարհաբարի ուսուցիչները փորձով գիտեն, որ աշակերտները մեր լեզուի ձևարանութեան ուսումից դժուար իւրացնում են բայերի խոնարհումը: Դրա առաջին պատճառն այն է, որ մեր բայական ձևերը, եթէ բաղադրեալ կոչուած ժամանակներն ևս առնուեն, թուով բաւական շատ են. նիւթի մեծութիւնն ու բարդութիւնն ուրիմն ըստ ինքեան դժուարութիւն է պատճառում: Երկրորդ և զլիաւոր պատճառը սակայն, իմ կարծիքով, այն է, որ այդ բարդ նիւթն անմշակ ձևով է աւանդւում երիւանհերին:

Ով երբ և է գրադուել է մեր բայերի խոնարհման խնդրով, նկատած կը լինի այն անբաւարար գրութիւնը, որ կայ Պալասանեանի քերականութեան մէջ և որին այս կամ այն շնչին փոփոխութիւններով հետեւում են ընդհանրապէս ուրիշները: Դրանք բաղադրեալ ժամանակների հետ վարւում են քմահաճօրէն. ուղած ձևերն առնում են խոնարհման մէջ, չուղածները դուրս են ձգում և այս անում են առանց որևէ հիմունքի: Անհասկանալի է մնում, օրինակ, թէ ինչ արտօնութեամբ խոնարհման մէջ իրրև առանձին ժամանակներ մտել են՝ կարգացել եմ, կարգացել էի, և արհամարհուած, դուրս են ձգուած նման կազմութեան ձևերը՝ կարդալու եմ, կարդալու էի. կամ ինչո՞ւ պիտի սովորել իրրև «ապառնի բաղադրեալ» ձև՝ կարգացած կը լինի, և չպիտի սովորել կարգալիս կը լինի ձևը:

Մի անգամ որ բաղադրեալ ժամանակներն առնւում են խոնարհման մէջ, թոյլատրելի չէ այսպէս քմահաճութեամբ վարուել: ամեն այսպիսի վարմունք անպայման պիտի անդրադառնայ աշակերտի մտքի վրայ և նրա ուսման հետեանքը պիտի լինի ոչ թէ այն, որ մեր լեզուի բայական ձևերի մասին պարզ հասկացողութիւն կազմի, այլ միայն խառնաշփոթութիւն:

Արդարև մեր բոլոր բաղադրեալ ժամանակները խոնարհման մէջ առնելը հեշտ չէ, որովհետև գրանք թուով այնքան շատ են, որ նոյն իսկ առանձին յորջորջումներ գտնելը և դասաւորելը դիւրին բան չէ. բայց պէտք է յաղթել այդ դժուարութեանը և խոնարհման մի այնպիսի գրութիւն յօրինել, որ

1. Բոլոր ձևերը, պարզ ու բաղադրեալ, իր մէջ ամփոփի:

2. Գործածուած տերմինները, յորջորջումները, ոչ միայն սակաւաթիւ լինին, մտքում հեշտ պահելու համար, այլ և յարմար լինին ձևերի նշանակութեանն և կազմութեանը, այսինքն յոր-

ջորջումներով միայն կարելի լինի հասկանալ ձևերի կազմութիւնն ու գլխաւոր նշանակութիւնը: Եւ որ գլխաւորն է՝

3. Պարզ ժամանակներն ու զերբայներն իմանալուց յետոյ՝ աշակերտն ինքը կարողանայ բոլոր բաղադրեալ ձևերը կազմել և անուանել:

Այսպիսի մի դրութեան համար հարկաւոր է ամենից առաջ ճիշտ որոշել մեր բայերի եղանակներն ու ժամանակները:

Քանի՜ եղանակ կայ մեր խոնարհման մէջ և յատկապէս զի եղանակները:

Բայի եղանակները բաժանուում են երկու խմբի, առաջին՝ եղանակներ, որոնցով կազմուում են դատողութեան խօսքեր, երկրորդ՝ եղանակներ, որոնցով կազմուում են ցանկութեան խօսքեր (*Begehrungssatz, предложение желания*):

Դատողութեան եղանակներն երեք են, համապատասխան կանախ՝ կատեգորիաների մէջ տրամաբանական դատողութեան համար դրած երեք եղանակաւորութիւններին, որ են՝ անբտորիկ (հաստատական, իրական), պրորիեմատիկ (առեղծուածային, երկբայելի, խնդրական) և ապոդիկտիկ (անհրաժեշտ):

Անբտորիկ դատողութիւնն արտայայտուում է իրականութիւն, իրօք գոյութիւն ունեցող եղելութիւն. դրան համապատասխան է քերականութեան մէջ սահմանակաճ եղանակը, որ իրականութեան եղանակն է (*modus realis*): Դրանով արտայայտուած եղելութիւնը իրապէս գոյութիւն ունի, թէ՛ միայն ի հարկէ խօսողը չի սխալուում, կամ սուտ խօսուում:

Պրորիեմատիկ դատողութիւնը ոչ թէ եղելութեան իրականութիւնն է յայտնուում, այլ կարելիութիւնը, հնարաւորութիւնը, եղելութիւնը կարող է հաւասարապէս և լինել և չլինել: Խօսողը միայն ենթադրուում է եղելութիւնը: Քերականութեան մէջ այս եղանակաւորութեանը համապատասխան գնում են հնարաւորութեան կամ կարելիութեան եղանակ (*modus potentialis*), որով եղելութիւնը ներկայացուում է պարզապէս իրրեւ մտածուած, ենթադրուած, հնարաւոր. այսինքն այնպիսի, որ կարող է լինել, կարելի է որ լինի:

Իսկ ապոդիկտիկ դատողութիւնը ցոյց է տալիս գործողութեան անհրաժեշտութիւն. դրա համապատասխան է քերականութեան մէջ անհրաժեշտութեան կամ հաւկազդութեան եղանակը (*modus necessitatis*), որով գործողութիւնը անհնար է այլ կերպ ըմբռնել, քան ինչպէս որ ըմբռնում ենք մեր մտածողութեան օրէնքների հիման վրայ: Օրինակ՝ Նա այժմ հասել է տուն և այս բոլորէիս տանն է,—իրական եղելութիւն է: Նա այժմ հասած կը լինի

տուն և այս բոլորն առնելով, — կարելի, հնարաւոր եղելութիւն է: Իսկ նա այժմ հասած պիտի լինի տուն և այս բոլորն առնելով պիտի լինի, — անհրաժեշտօրէն այդպէս ենք մտածում:

Այս երեք եղանակաւորութիւնը բոլոր լեզուների մէջ ևս ի հարկէ գոյութիւն ունի, որովհետեւ հիմնուած է տրամաբանական անհրաժեշտութեան վրայ, բայց դրանց արտայայտութեան ձևը լեզուների մէջ միակերպ չէ, մասնաւոր կարելիական և հարկադրական եղանակներին: Ուստի փոքր ինչ աւելի երկար կանգ առնենք այս կէտի վրայ, որ մեր քերականութիւնների մէջ ուշադրութեան չի առնուում:

Շատ լեզուների մէջ կարելիական և հարկադրական եղանակների համար չկան յատուկ բառաձևեր, այսինքն բայի մի առանձին ձևով չի արտայայտուում անհրաժեշտութիւն կամ կարելիութիւն, ինչպէս են օրինակ՝ սահմանական և հրամայական եղանակները: Օրինակ՝ երբ ասում ենք՝ գնացիք, գնացէք, բայի ձևերն արդէն ցոյց են տալիս, որ բայիմաստն առաջին դէպքում իրրեւ իրական եղելութիւն, իսկ երկրորդ դէպքում իրրեւ հրաման վերագրուում է բայի դէմքին: Այսպիսի մի ձև, որ մի բառով, բայի կազմութեամբ արդէն արտայայտուէր անհրաժեշտ հարկ ու պէտք կամ հնարաւորութիւն, չկայ և մեր լեզուի մէջ: Եւ այս զարմանալի չպիտի լինի, որովհետեւ տրամաբանական և քերականական կատեգորիաները միշտ էլ իրար հաւասար չեն:

Դատողութիւնը ինչպէս շատ լեզուների մէջ, նոյնպէս և հայերէնում կարելիական կամ հարկադրական բնաւորութիւն է ստանում, երբ բայի վրայ աւելանում է մի բառ կամ մասնիկ, որ ցոյց է տալիս հնարաւորութիւն կամ անհրաժեշտութիւն, կամ թէ անորոշ դերբայը զուտ է իրրեւ խնդիր այնպիսի բայերի, որոնք նշանակում են կարողանալու, կարելի, հնարաւոր լինելու, կամ պարտաւոր լինելու, անհրաժեշտօրէն ստիպուած լինելու զաղափար: Դրանք եղանակական կամ եղանակիչ բառեր, մասնիկներ կամ բայեր են, որոնք գրուելով բայի վրայ՝ նոր եղանակի նշանակութիւն են տալիս նրան:

Դրաբարի սովորական եղանակիչ բայերն են կարելիութեան իմաստով՝ կարեմ, մարթեմ, մարթի, մարթ է, (գերմաներէն können, dürfen, mögen), իսկ հարկադրութեան իմաստով՝ պարտեմ, պարտ է, հարկ է, պիտի, (գերմ. müssen, sollen): Այդ բայերի սահմանական եղանակի հետ անորոշ դերբայը ստանում է կարելիական կամ հարկադրական եղանակի նշանակութիւն: Երբ ասում ենք՝ նա կարէ գալ, նա կարող է գալ, հաստատուում է նրա կարողանալու իրականութիւնը. բայց կարեմ բայն իրրեւ լրացում ունի գալ, ուստի և այդ խօսքով հաստատուում է նրա գալ կա-

բողանալը. և որովհետև կարեմ բայը ինքը կարելիութիւն, հնարաւորութիւն է ցոյց տալիս, ուստի և միանգամայն նրա գալը հաստատուում է իբրև կարելի, հնարաւոր: Տրամաբանօրէն ուրեմն այդ խօսքը՝ նա կարէ գալ, կամ մարթէ գալ, նմա մարթ է գալ,— կարելիական խօսք է, իսկ քերականօրէն դա մի սահմանական խօսք է:

Նոյնպէս տրամաբանօրէն ապողիկտիկ խօսք է նա պարսի գալ, նմա պարս է գալ, նմա հարկ է գալ, որ ցոյց են տալիս թէ գալու անհրաժեշտութիւնը կայ նրա համար: «Նա պարտի գալ» խօսքը սակայն եթէ իմաստով հարկադրական է, քերականական ձևով սահմանական է. «Պարտիլը նրա համար ճիշտ նոյնպէս իբրև իրական եղած է ասուում, ինչպէս քոչուսն քոչի խօսքի մէջ թռչելը թռչնի համար: Ճիշտ է ի հարկէ, որ երբ մէկը պարսի գալ, գալն էլ անհրաժեշտօրէն վերագրւում է նրան», բայց դա քերականական ձևով չի արտայայտուում, այլ մի հետևութիւն է միայն: «Նա պարսի գալ և նա կարէ գալ խօսքերը նշանակութեամբ խոշոր տարբերութիւն ունին, որ առաջանում է պարսիմ և կարեմ բայերի իմաստից. բայց քերականօրէն այդ երկու խօսքն ևս միևնոյն կազմութիւնն ունին [սահմանական են] և ոչ մի քերականական զանազանութիւն կարելի չէ դնել դրանց մէջ այն պատճառով, որ բայերը՝ պարսի և կարէ տարբեր են, ինչպէս որ ոչ մի տարբերութիւն չի դրւում, երբ ենթակաները փոխւում են»:¹⁾

Յաճախ այս երկու եղանակաւորութիւնը կարելի է արտայայտել բայի վրայ որ և է եղանակական մակբայական լրացում դնելով, օրինակ՝ նա գալիս է իրական խօսք է, իսկ նա գուցէ գալիս է, նա թերևս գալիս է, նա կարելի է գալիս է՝ կարելիութեամբ ասուած խօսքեր են. իսկ նա անպայման գալիս է, նա անհրաժեշտօրէն գալիս է—ունին անհրաժեշտութեան իմաստ, թէպէտև բոլոր դէպքերում գալիս է սահմանական եղանակ է:

Ինչպէս որ գրաբարում ես պարտիմ գնալ, դու պարտիս գնալ, նա պարտիս գնալ և այլն, կամ ինձ մարթի գնալ, քեզ մարթի գնալ և այլն, ձևով սահմանական են, իսկ նշանակութեամբ հարկադրական կամ կարելիական են, նոյնպէս ի հարկէ և աշխարհաբարում՝ ես պարտաւոր եմ գնալ, դու պարտաւոր ես գնալ, նա պարտաւոր է գնալ և այլն, կամ՝ ես կարող եմ գնալ, դու կարող ես գնալ, նա կարող է գնալ: Նոյն կերպ նաև մեր բարբառներում սահմանական եղանակով հարկադրական եղանակի իմաստ է արտայայտուում, երբ ասում են՝ ես պէտք

1) F. Kern. Die Deutsche Satzlehre, zweite Auflage, հր. 20—23.

եմ գնալ, դու պէտք ես գնալ, նա պէտք է գնալ և այլն. կամ ես պիտիմ գնալ, դու պիտիս գնալ, նա պիտի գնալ, մենք պիտինք գնալ և այլն. կամ պիտիմ բայի փոփոխութեամբ՝ ես 'տեմ (= պտեմ) գնալ, դու 'տես գնալ, նա 'տի գնալ, մենք 'տենք գնալ, դուք 'տէք գնալ, նրանք 'տեն գնալ. կամ յետադաս՝ ես գնալ 'տեմ (= պտեմ), դու գնալ 'տես, նա գնալ 'տի և այլն: Այս բոլոր դէպքերում բայը սահմանական եղանակ է, թէպէտև ամբողջ խօսքն իմաստով հարկադրական է:

Բայց մենք ունինք նաև պիտի գնամ, պիտի գնաս, պիտի գնայ և այլն, և կը գնամ, կը գնաս, կը գնայ և այլն: Այժմ հարց է, եթէ այս կաղմութիւններն առնուում են խոնարհման մէջ, մը եղանակի մէջ պիտի դրուին. սահմանականի՞ մէջ, թէ՛ իրրեւ առանձին եղանակներ:

Պիտի գնամ ձեռն անպայման անհրաժեշտութիւն է ցոյց տալիս, անհրաժեշտութիւնն իրրեւ անհրաժեշտ հարկ ու պէտք, պարտք, ստիպմունք բարոյական պարտքից, բնութիւնից, դրութիւնից և այլն, կամ թէ տրամաբանական անհրաժեշտութիւն, որ հիմնուած է մեր խելքի, դատողութեան վրայ: Թէ պիտի գնամ ձեռն ապուղիկալի, հարկադրական խօսք է և ոչ թէ ասերտորիկ, իրական, դրան համոզուելու համար՝ բաւական է առնել մի քանի խօսքեր, որոնք կաղմուում են զբարարում պարտիմ, պարտ է, հարկ է բայերով, կամ օտար լեզուների մէջ müssen, sollen, devoir, должное և այլն բայերով, և զարձնել աշխարհաբար. այդ հարկադրութիւնը մենք արտայայտում ենք պիտի (պէտք է) գնամ ձեռով: Օրինակ՝ պարտիմք զմիմեանս սիրել,—մենք պարտաւոր ենք միմեանց սիրել,—մենք պիտի միմեանց սիրենք: Առն մարդոյ չէ պարտ ծածկել զգլուխ իւր,—տղամարդը գլուխը չպիտի ծածկի: Un homme d'honneur doit tenir sa parole, ազնիւ մարդը իր խօսքը պիտի կատարի: Vous devriez vous conduire autrement, դուք պիտի ուրիշ կերպ վարուէիք: A la vie que mène cet homme, il doit être bien riche, իր վարած կեանքին նայելով՝ այս մարդը պէտք է շատ հարուստ լինի (նոյնպէս թարգմանած է Նուպարեանի բառարանի մէջ): Tous les hommes doivent mourir, բոլոր մարդիկ պիտի մեռնին (նոյնպէս և Նուպարեան): Je dois aller à la campagne, ես գիւղ պիտի երթամ (նոյնպէս և Նուպարեանն է թարգմանած): On se doit à soi-même de respecter... Մարդս իր պատուի համար պէտք է յարգի... (նոյնպէս թարգմ. և Նուպարեան):

Այսպէս և գերմաներէնի sollen, որ բարոյական պարտք է ցոյց տալիս, müssen, որ տրամաբանական անհրաժեշտութիւն է նշանակուում, թարգմանուում են պիտի, պէտք է ձեռով. օրինակ՝ Wir

sollen Gott mehr gehorchen, als den menschen մենք Աստուծուն աւելի պիտի (պէտք է) լսենք, քան մարդկանց. Ich muss über Nacht sehr fest geschlafen haben, denn ich habe nichts von dem Gewitter gehört գիշերս ես շատ խորը քնած պիտի լինիմ, քանի որ փոթորիկը չեմ իմացել:

Օրինակներ շատ բերելն աւելորդ եմ համարում. պիտի (պէտք է) բացով կազմուած ձևերի անհրաժեշտական նշանակութիւնը շատ պարզ է*):

Ի՞նչ եղանակ է կր մասնիկով կազմութիւնը՝ կը գնամ, կը գնայի, գնացած կը լինիմ, գնացած կը լինէի և այլն, արդեօք սահմանակա՞ն, թէ՞ մի առանձին եղանակ:

Պայտասնեանն այս երկու նոյն կազմութիւնն և, ինչպէս կը տեսնենք, նոյն եղանակաւորութիւնն ունեցող ձևերից առաջինները՝ կը գնամ, գնացած կը լինիմ՝ դրել է իբրև սահմանական, իսկ անցեալը՝ կը գնայի, գնացած կը լինէի ֆրանս. քերակ. աղղկացութեան տակ դրել է իբրև պայմանական, բացատրելով, թէ «պայմանական եղանակը խօսքը պայմանի տակ է դնում, յայտնելով թէ գործողութիւնը կաբող եր կատարուել, բայց մի որևիցէ պատճառով չի կատարուել»: Օրինակ՝ «ես գիրք կը կարդայի, եթէ ժամանակ ունենայի» ասացուածի մէջ պայմանական եղանակն է «կը կարդայի», իսկ պայմանը, «որի տակ դրւում է» այդ խօսքը, է «եթէ ժամանակ ունենայի»: Պայմանական եղանակ յորջորջումն ուրիշն առնուում է պայման ունեցող, պայմանաւորուած նշանակութեամբ:

Եթէ կը կարդայի ձևն իբրև «պայմանական եղանակ» է դրւում

*) Հարկաւոր է շեշտել, սակայն, որ խօսքն այստեղ արեւելեան աշխարհարարի մասին է: Արեւմտեան աշխարհարարը փոքր ինչ տարբերւում է արեւելեանից. այնտեղ պիտի զմամ ձևն երբեմն առնուում է իբրև սահմանական ապագայի, մինչդեռ մեր սահմ. ապագային՝ զմայու եմ սովորաբար հարկադրական նշանակութիւն ունի: Յիշեալի՝ il doit être riche, նա հարուստ պիտի լինի, նուապրեանի բառարանի մէջ թարգմանած է՝ նա պէտք է հարուստ լինի, այլ և՛ հարուստ լինելու է: On devrait planter des arbres ici, այստեղ ծառեր պէտք է տնկելին, նուապրեանը թարգմանած է՝ ծառեր տնկելու էր: Երբեմն արեւելեան աշխարհարարի մէջ ես վերջին ձևն, անենթակայ նշանակութեամբ, իբրև հարկադրական է գործ ածւում, բայց այդ միայն արեւմտեան աշխարհարարի աղղկացութեան տակ. արեւելեան աշխարհարարի մէջ պիտի զմամ հարկադրական է, իսկ զմայու եմ սահմանական, — ինչպէս որ սահմանական են և համապատասխան կազմութեան ձևերը՝ դնում եմ, գնացել եմ, և եթէ հանգ. Ֆինկն, օրինակ, արեւելեան աշխարհարարի քերականութեան մէջ իբրև հարկադրական եղանակ դնում է դնալու եմ, գնալու ես ելն, դա միայն հետեւողութիւն է Այտնեանի քերականութեան:

նրա համար, որ դա գործ է ածուած պայմանաւորուած նշանակութեամբ, ինչո՞ւ կը կարգամ ձեր նոյնպէս չպիտի գրուի իբրեւ պայմանական, քանի որ դա ևս նոյնչափ իբրեւ պայմանաւորուած խօսք է գործածուած, որչափ և «կը կարգայի» ձեր. ևս զիրք կը կարգայի, եթէ ժամանակ ունենայի. ևս զիրք կը կարգամ, եթէ ժամանակ ունենամ: Բացի այդ՝ «կը կարգայի» ձեն անպատճառ միշտ պայմանաւորուած խօսք չի կազմում, որ գրուի իբրեւ պայմանական եղանակ. այլ դա ևս մենակ, առանց որ և է պայմանի, գործ է ածուած, ինչպէս և կը կարգամ ձեր:

Այս երկու ձևերը՝ կը գնամ, գնացած կը լինիմ և կը գնայի, գնացած կը լինէի՝ ոչ իրենց կազմութեամբ են միմեանցից տարբերուած և ոչ իրենց եղանակով. դրանց տարբերութիւնը միայն ժամանակով է, ինչպէս և նոյն կազմութիւնն ունեցող միւս ձևերը՝ գնամ, գնայի. գնում եմ, գնում էի. գնացել եմ, գնացել էի— ոչ թէ եղանակով են իրարուց տարբերուած, այլ միայն ժամանակով: Ուստի եթէ կը գնամ ձեր սահմանական է գրուած, նոյնպէս պիտի գրուի և կը գնայի ձեր, և ընդհակառակն, եթէ կը գնայի պայմանական է, նոյնը պիտի լինի և կը գնամ ձեր:

Ես սակայն մեր այս կը մասնիկով կազմութիւնը ոչ սահմանական եմ համարում և ոչ պայմանական, այլ մի կարեւորական կամ ենթադրական եղանակ, կամ լաւ ևս՝ ըղձական եղանակ կարեւորական նշանակութեամբ: Ուստի առաջ տեսնենք ըղձական եղանակը:

Յանկուրեան խօսքերը ցոյց են տալիս կամք ու ցանկութիւն, հրաման կամ արգելք, կամ թէ յորդոր, զորում, խնդիր, մաղթանք, իղձ մի բան անելու: Լեզուների մէջ ցանկութեան խօսքերի համար կայ մի յատուկ եղանակ՝ հրամայականը. յունարէնը բացի դրանից ունի նաև ըղձական եղանակը (*modus optativus*): Կոյ արգեօք մեր աշխարհարարում բացի հրամայականից մի ուրիշ բայական ձև յատուկ ցանկութեան խօսքեր կազմելու համար:

Պալասանեանը մեր գնամ, գնայի ձևերը դրել է իբրեւ ստորադասական եղանակ: Այսպէս կոչուած է, որովհետեւ «ստորադասականով բայը միշտ ենթարկուած է, ստորադասուած է մի ուրիշ բայի,— լինի վերջինս խօսքի մէջ արտայայտուած թէ զօրութեամբ հասկացուած,— որ հարկաւոր է մի տրամաբանական միտք արտայայտելու համար»: Ուրիշ խօսքով ստորադասական եղանակը կազմում է ոչ թէ զլիսաւոր կամ անկախ խօսք, այլ երկրորդական խօսք: Ֆրանսերէնում, օրինակ, *subjonctif* ստորադասական եղանակը անկախ կամ զլիսաւոր խօսք չի կազմում, բացի մի երկու բայից կամ մի երկու կիրառութիւնից, այն էլ երբեմն զարձեալ *que*

որ շաղկապով սկսուած, այնպէս որ այս դէպքում էլ Ֆրանսերէնի ստորադասականն ըմբռնուած է դարձեալ իբրեւ խնդիր մի գեղ-
չուած բայի։ Այս պատճառով և Ֆրանսերէնի քերականութիւն-
ների մէջ այս եղանակի սկզբում գրուած է que, որ. քէ շաղկապը։
Նման ձևով և Պալատանեանը մեր «ստորադասականի» առաջ դնում
է որ շաղկապը, կարծես թէ այս շաղկապն անհրաժեշտ լինի մեր
այս եղանակն ըմբռնելու համար։ Սակայն այդ ճիշտ չէ. հայերէնի
զմամ, զմայի ձևերը թէ անկախ ու գլխաւոր խօսքեր են կազմում
և թէ երկրորդական. զմա՛մ, ՏԵՍՆԵՄ նրան. Աստուած հոգի՛ն (ու-
սաւորէ. գնացի, որ ՏԵՍՆԵՄ նրան)։

Միւս կողմից մեր այս եղանակն իր նշանակութեամբ հա-
մապատասխան չէ նաեւ լատիներէնի ու յունարէնի conjunctivus
շաղկապական եղանակին, որ թէ դատողութեան և թէ ցանկու-
թեան խօսքեր են կազմում. մեր զմամ, զմայի ձևերը միշտ ցան-
կութեան խօսքեր են կազմում և երբեք դատողութեան խօսքեր։

Տեսնենք նախ մեր այս եղանակի գործածութիւնները լատի-
ներէնի և յունարէնի ցանկութեան խօսքեր կազմող ձևերի համեմա-
տութեամբ։ Տպագրութեան յարմարութեան համար միայն՝ մենք
կը խուսափենք լատիներէն կամ յունարէն օրինակներ մէջ բերելուց,
այլ կը բաւականանանք քերականութիւնների մէջ ընդունուած
սովորական յորջորջումները յիշելով։

1. Լատ. conj. optativus եղանակը և յունարէն optativus բղ-
ձական եղանակը ցոյց են տալիս տենչանք, փափագ մի բան
անելու. հետն ունին յաճախ մի ցանկութիւն ցոյց տուող բառ,
ինչպէս և հայերէնում՝ երանի, գէթ, գրարար՝ իցիւ, ժշխէ և այլն։
Այս գործածութիւնը, ինչպէս և յունարէնում ու լատիներէնում,
շատ սովորական է երգումների, օրհնութիւնների, անէծքների,
բարեմաղթութիւնների և այլն մէջ, ինչպէս՝ բարով վայելես, զօ-
րանաս, Աստուած կեանք տայ, գետինը մտնես, գլուխս մեռնի
թէ... ևս մեռնիմ թէ...։ Եթէ ցանկութիւնն անիրադրձելի է,
գրուած է անցեալ ժամանակով (յունարէն praeteritum առանց օն
մասնիկի). ինչպէս՝ Ախ, ես երանի կայծակ լինեի, որոտ ճայ-
թիւնով մոռալ ամպերից բռչեի վերեւ, զարկեի ուժգին և պատա-
ռեի կամարն երկնքի, ցոյց տայի երկրին գաղանիքը վերին
(Յովհ. Թում.)։

2. Լատ. և յուն. conj. hortativus յորգորական, որ գործ է
ածելում գրդում, խնդիր և հրաման ցոյց տալու համար, ուստի և
կոչուած է նաեւ երբեմն conj. imperativus հրամայական, գերմանե-
րէն քերականութիւնների մէջ երբեմն նաեւ պարզապէս բղձական.
հայերէնում շատ գործածական է բոլոր գէմքերի համար թէ ներկայ
և թէ անցեալ. Գնամ, տեսնեմ նրան։ Գիրքդ տան ինձ։ Գնանք,

յիշենք: Գնաս, ասես նրան, որ դայ ինձ մօտ. մի գնայիր, նրան ասէիր, որ դայ ինձ մօտ: Այսպէս և երբ հրամայականով ասած անենթակայ խօսքերն ենթակայական ձևով են արտայայտուում, հրամայականը փոխւում է ըզձականի և երկրորդ դէմքի տեղ դրւում է երրորդ դէմք, ինչպէս՝ «Կեր փորձած թանը, մի՛ ուսիլ անփորձ մածունը», «Մարդ ուսի փորձած թանը, չուսի անփորձ մածունը»:

3. Լատ. conj. prohibitivus արգելական, որ միևնոյն վերևի ձևերն են միայն բացասական. ինչպէս՝ չգնաս. գողութիւն չանես. չգնանք: Չըլնիմ, չիմանամ թէ այդ բանն անես: Չունենամ քեզ պէս ընկերը:

4. Լատ. և յուն. conj. dubitativus կամ deliberativus երկրայական, որ գործ է ածւում անվճռականութիւն, վարանում ցոյց տալու համար, իբրև երկրայական հարցում. ինչպէս՝ գնամ, թէ չէ: Ի՞նչ անենք: Հիմի՞ էլ լռենք:—Բացասականը յաճախ ցոյց է տալիս պարզապէս ոչ ցանկութիւն, մի գուցէ, չլինի թէ բառերի երկրայական նշանակութեամբ. ինչպէս՝ Սօսը չգժուի, գնայ Վաչէին մի վնաս տայ:

Մեր այս եղանակն իր ցանկութեան խօսքի բնաւորութիւնը պահում է և երկրորդական խօսքերի մէջ.

ա) Հրամայականով արտայայտուած ուղղակի խօսքը երբ փոխւում է անուղղակի խօսքի, հրամայականը դառնում է ըզձական. ինչպէս՝ Յիսուս ասաց իր աշակերտներին. «Ենացե՛ք, քաղցե՛ք հեթանոսներին»: Յիսուս ասաց իր աշակերտներին, որ զնան, քաղցն հեթանոսներին:

Այսպէս ըզձականով դրւում են ասել, պնդել, յայտնել, գրել և այլն բայերից յետոյ երկրորդական խօսքերը, երբ ինչպէս մի ցանկացած նպատակ կախուած են գլխաւոր խօսքի ենթակայի կամքից. օրինակ՝ «Ես ասացի, որ նա կը գայ», «Ես ասացի, որ նա գայ». առաջին խօսքի մէջ նրա գալ չգալն անկախ է իմ կամքից, բայց երկրորդի մէջ ես նրա գալը ցանկանում եմ: Այսպէս ըզձականը գործ է ածւում և բազմաթիւ ցանկութիւն կամ ոչ-ցանկութիւն ցոյց տուող բայերից ու խօսքերից յետոյ, ինչպէս են՝ ցանկանալ, խնդրել, հրամայել,—վախենալ, ամաչել և այլն*:

Բացի այդ՝ ըզձականը գործ է ածւում նաև

բ) Իբրև նպատակի խօսք, որ բմբռնւում է իբրև մի ցան-

* Վախենալ և այլն հայի, ինչպէս և յունի համար մի բացասական ցանկութիւն է. ուստի հայերէնում ըզձական է խնդրում, իսկ յունարէնում ցանկութեան conj. կամ ըզձական:

կացած հետևանք (յուշարէն պատմական ժամանակներից յետոյ ըղձական). գնացի, որ տեսնեմ նրան:

գ) Իբրև պայմանական խօսք, ինչպէս և յուշարէնի ըղձականը.— Եթէ այդ ասես, կը սխալուես:

Պայմանական խօսքերի կարգին պատկանում են և զիջական խօսքերը, որոնք դրուում են հայ. և յուն. ըղձական (թէկուղ վատ եղանակ էլ լինի, ես պիտի ձանապարհ ընկնեմ), ինչպէս և զիջական—ընդհանրացական և անորոշ կրկնութեան պայմանական, ժամանակի և այլն խօսքերը, որոնց սկզբում յաճախ դրոււմ է կուգեբառը, որ կարող է և չդրուել, ինչպէս՝ Ուրուրն ինչքան կուգէ սպանե՛ հաւը չի վերջանայ,—Ուրուրն ինչքան սպանե... Երբ էլ գայիր, կը տեսնէիր:—Ցանկութեան պայմանական խօսք է նաև միայն, միայն քե բառերով սկսուածը... Միայն չհասցեք խղճուկի յոյսը:

դ) Իբրև ժամանակի խօսք մինչեւ բառի հետ, ինչպէս և յուշարէնում: Մինչև Շուշանը զարգարուի, ժամը կարձակուի.

Թողնում ենք մեր այս եղանակի՝ գնամ, գնայի ձևերի մի քանի գործածութիւնները, որոնց մէջ ևս դրանք ցանկութեան խօսքեր են կազմում: Բերածներից արդէն պարզ է, որ մեր այս եղանակը համապատասխան է յունարէնի և լատիներէնի conj. եղանակներին, երբ ցանկութեան խօսքեր են կազմում. և յունարէնի ըղձական եղանակին, ի միջի այլոց յատկապէս մի քանի կիրառութիւնների մէջ (ինչպէս պայմանական խօսքի մէջ, մինչեւ բառից յետոյ), երբ ըստ երևութին կարծես ցանկութիւն չէ արտայայտում:

Մենք ունինք ուրեմն երկու ցանկութեան խօսքեր կազմող եղանակ՝ հրամայական և ըղձական:

Արդարև մեր ցանկութեան երկրորդ եղանակն իր գործածութեամբ մի տեսակ խառնուրդ է conj. և opt. եղանակների, այսինքն իր մէջ ունի մասամբ conj.-ի նշանակութիւն (առանձնապէս իբրև conj. deliberativus գործածութեան մէջ), բայց մի անսովոր երևոյթ չէ լեզուների մէջ, որ մի եղանակն երկու եղանակի խառնուրդից կազմուած լինի: Գերման լեզուների մէջ, օրինակ, conj.-ի գործածութիւնները մեծ մասամբ անցել են opt.-ին, իսկ լատիներէնի conj.-ը իբրև մի խառնուրդ ծագած է նախահնդեւրոպական conj. ից և opt.-ից: Երկու եղանակի «այս խառնուրդը նրանից է առաջ գալիս, որ նրանց կիրառութեան շրջաններն իրար շօշափում են», երկուսն էլ գործ են ածւում իբրև յորդորական*:

*) Brugmann, Kurze Vergl. Gramm. der indg. Sprachen. էր. 579—585:

Միւս կողմից այս եղանակն իրրեւ ըղձական դնելու համար պէտք է նկատի ունենալ նրա ծագումը: Շատ հնդեւրոպական լեզուների մէջ սկզբնական ըղձական անցեալի տեղ անցել է սահմ. անցեալը նոր կիրառութեամբ. ուրիշ խօսքով սահմ. անցեալը դարձել է նաեւ ըղձական անցեալ, որին կից է և նրա գործածութիւնն իրրեւ անիրական (irrealis), ինչպէս՝ յունարէնում praeteritum-ը (անցեալը), մի ըղձական մասնիկով՝ εἰ γάρ, εἰδὲ (երանի, ո՛չ թէ): «Յունարէնում սահմանականն անցել է ըղձականի տեղ. εἰδ' ἔχομαι «երանի ունենայի»-ը γνοίης ἄν «կը ճանաչէիր» ձևերի փոխանակ անցել են անցեալ ժամանակը ոչ-երկզիմի ցոյց տուող εἰδ' εἶχον և εἶχως ἄν: Ըղձական մասնիկով և ἄν-ով պահուում է խօսքի ըղձական բնաւորութիւնը: Սրան էլ միանում է անցեալի գործածութիւնն իրրեւ անիրական նաեւ ներկայի համար, օրինակ՝ εἰδ' εἶχε, ὡ τεκοῦσα, βελτίους φρένας «երանի, ով մայր, աւելի լաւ սիրտ ունենայիր»:^{*}

Այս գործածութիւնն իրրեւ ըղձական անցեալ ունի նաեւ գրաբարի անցեալ անկատարը մի ըղձական մասնիկով, ինչպէս՝ Ὅ, 2 թէ անսայիք փոքր մի,—որ և, ինչպէս յունարէնի անցեալը (praeteritum), գործածւում է պայմանական խօսքերի մէջ իրրեւ անիրական, ինչպէս՝ եթէ եւ հաւատացեալ թագաւորի առաջի, փութայի եւ ոչ յապաղէի: Գրաբարի զնայի ձևի համար աշխարհաբարում պահուած է ահա նրա այս գործածութիւնն իրրեւ ըղձական անցեալ, մինչդեռ նրա բուն նշանակութիւնն իրրեւ սահմ. անցեալ՝ (=գնում էի) չկայ մեր նոր լեզուի մէջ: Աշխարհաբարի զնայի անցեալն ուրեմն ոչ թէ ստորադասական անցեալ է, այլ ըղձական:

Սահմ. անցեալի այս՝ իրրեւ ըղձական գործածուելու նմանութեամբ համապատասխան սահմ. ներկան ևս գնամ (=գնում եմ) գործ է ածուել ըղձական նշանակութեամբ: «Երանի թագաւորէիր» խօսքի նմանութեամբ ասուել է և «երանի թագաւորես»: Նոյն կերպ և պայմանական խօսքերի մէջ՝ «Թէ միայն մերձենամ ի հանդերձս նորա, փրկիմ»: Եւ այս գործածութիւնն, ինչպէս անցեալի, նոյնպէս և ներկայի համար այնքան ընդհանրացել է, որ սահմ. ներկայի ձևը՝ զնամ՝ այժմ միայն այսնոր նշանակութեամբ է գործածւում:

Բացի այդ՝ պիտի դիտել և հետեւեալը: Ըղձական եղանակը հնդեւրոպական լեզուների մէջ ունի երկու տարբեր նշանակութիւն.

^{*}) Brugmann, նոյն. եր. 586.

1. Յանկութեան ըղձական, որ ցոյց է տալիս պարզապէս գործողութեան ցանկութիւն, ինչպէս՝ αὐτὰ καὶ τὴν «իսկոյն մեռնիմ». երկրորդ և երրորդ դէմքերի համար նաև խնդիր, ինչպէս՝ գիրքդ տաս ինձ: Այս կարգին պատկանում է և ըղձականի գործածութիւնը պատուէրների մէջ. հօրդ ու մօրդ պատուես, սուտ չիօսես:

2. Կարելիական ըղձական, որ ցոյց է տալիս հնարաւորութիւն, հակառակ սահմանականի, որ իրական գործողութիւն է ցոյց տալիս: Այս նշանակութեամբ ըղձականը գործ է ածուում և պայման ու գործողութեան անիրականութիւն արտայայտելու համար:՝ Օրինակները ներքևում կը տեսնենք. այստեղ միայն հետևեալը նկատենք: Կարելիական նշանակութիւնը մեր լեզուն նոյնպէս արտայայտում է ըղձականով, բայց մեր ըղձականը՝ զնամ, զնայի՝ այժմեան լեզուի մէջ հազուադէպ կը գործածուի իբրև կարելիական ըղձական (potentialer opt.), ինչպէս է գրաբարում և մանաւանդ միջնադարեան ռամկօրէնում. դա այժմ սովորաբար ցանկութեան ըղձական է: Կարելիական նշանակութիւն արտայայտելու համար այժմ այս ըղձականի վրայ դրում է կը մասնիկը, ճիշտ ինչպէս յունարէնում կարելիական նշանակութիւն ցոյց տալու համար ըղձական եղանակի (opt.) վրայ դրում է *ἄν* կամ *ἄε* մասնիկը, որով կազմում է կարելիական եղանակ ասածը (modus potentialis): Բացի այդ՝ յունարէնում նոյն մասնիկը դրուելով անցեալի վրայ (praeteritum), որ, ինչպէս տեսանք, գործ է ածուում իբրև ըղձական անցեալ, տալիս է նրան կարելիական և անիրական նշանակութիւն (praeteritum des Modus potentialis և modus irrealis),—ճիշտ ինչպէս մեր կը մասնիկը գնայի անցեալի վրայ՝ կը զնայի:

Կը մասնիկով ըղձականը կազմում է ուրեմն կարելիական իմաստով դատողութեան խօսք:

(Վերջը միւս անգամ)

Մ. Արեղեան

*) Bragmann, նոյն եր. 583 հտ. А. Мефе, Введение въ сравнит. Грамматику. 1911. եր. 186.

